ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՊԱՐՈՆ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Ներսիսյան.**

Ի պատասխան Ձեր 06.05.2021թ. հ.158 գրության՝ տեղեկացվում է.

Աէրացիայի փողոցի հ.2/2 հասցեում գտնվող շենքն ընդգրկված է Երևանի քաղաքապետարանում հաշվառված 3-րդ աստիճանի վնասվածության՝ ամրացման ենթակա բազմաբնակարան շենքերի ցանկում (համաձայն՝ «Քաղաքացիական ծրագրերի փորձագիտական կենտրոն» ԲԲԸ-ի կողմից կատարված կրկնակի հետազոտության արդյունքում՝ 19.07.2016թ. տրված եզրակացության)։

Համաձայն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության գլխավոր քարտուղարի 20.04.2021թ. հ.02/15.2/1958-2021 գրության՝ 13.02.2021թ. Երևան քաղաքից 8 կմ հարավ-արևելք տեղի ունեցած երկրաշարժի ժամանակ Երևան քաղաքում գրանցվել են 5-6 բալ ուժգնությամբ ցնցումներ, որի ժամանակ շենքերի կրող պատերին և հանգույցներին վթարավտանգ ճաքեր կամ ճեղքվածքներ չեն առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ